



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

241  
U-97

OCT 2000

# ՀԻՄՈՒՆՔ

## ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ, ԳԻՏՈՒԹԵԱՆ

Ե Ի

### ԿՐՕՆԻ

Մ Ա Ս Ն Բ.

### Ա. ԱՍՏՈՒԱՆՆԵՐ



Երևելի Աստուածաբաններու գրութիւններէն բաղկով,  
փոքրիկ տղոց հասկնալի ոճի վերածուած ու յօրինուած

### ՊՕՂՈՍ ՍՈՒՐԵԱՆԷ



### Վ. Ա. Ի. ԵՐԱՅԵԱՆ

ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆ. ԽՈՐՀՈՒՐԴԷՆ

### ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

### 1901

### ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՍԳԱԵԱՆ

Կալարա, Գաւրչուհոյ Խան, քիւ. 7.

241  
U-97

*[Handwritten signature]*

07 .08. 2013

5181

# Վ Ա Ի Ե Ր Ա Գ Ի ր

ՈՒՍՈՒՄՆ. ԽՈՐՀՐԴՈՑ  
ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Ազգային Ուսումն. Խորհուրդն քննութեան առնելով «Հիմունք Բարոյականութեան, Գիտութեան և Կրօնի» անուն դասագրքին Ա. և Բ. մասերն, պատրաստեալ ի Պօլոս Էֆէնաի Մարեանէ, դասը դոյն օգտակար ի պէտս Հոյ ուսանողաց, առտի և այսու պաշտօնագրով կ'արտօնէ նոյն դասագրքին յԱզգային նախակրթարանս դորձածութիւնն:

Ի դիմաց Ուսումն. Խորհրդոյ

Ատեճազպիր

Ատեճապետ

ՊՕՂՈՍ Գ. ՔԷՐԷՍՏԷՃԵԱՆ

ՏՈՒՔԹ. Վ. ԹՈՐԳՈՄԵԱՆ

6 Հոկտեմբեր 1900


Պատրիարքարան Հայոց

Կ. ՊՈԼԻՍ

معارف عمومیہ نظارت جلیہ سنک ۲۸ تشرین ثانی ۳۱۶ و ۱۷  
رجب ۳۱۸ تاریخی و ۳۱۹ نومرولی رخصتنامه سیله طبع اولنشد

№ 5.

Տես Կրթական Ծրագիր երես 24 մասն Բարոյական Կրթութեան.  
«6. Պարս ամ Աստուած.-- ճանչնալ, սիրել և պատեղ զԱստուած, եւն. »



# ԳՆՈՒԹ Ա.

## ՄԱՐԴԿԱՅԻՆ ԽՈՐՀՐԳԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

### ԺԱՄԱՑՈՅՑ

Ժամայոց տեսած էք և գլտէք ոչ Աէն մինչև 12 թուանշաններ գծաւած են անոր ուղիղ կողմին վրայ շարժանակի:


2 ասեղներ մէկը մեծ ու միւսը փոքր՝ թուանշաններուն վրայ այնպիսի հաշուով ու այնպիսի ուղղութեամբ կը չըջին շարունակ որ փոքրը ժամը քանին ըլլոյր կը ցուցանէ և մեծն ալ վայրկեանները:

Եթէ հետաքրքրութեամբ բարեկամ՝ ժամագործի մը հարցնելու ըլլանք թէ՛ այս ասեղները ո՞վ շարժան կը պահէ ու այս ուղղութիւնը ու կարգադրութիւնը ուսկի՞ց է:

Ժամագործը կը ջանայ բացատրել, բայց մենք ժամագործութիւն չգիտնալուս համար հազիւ կրնանք հասնալ կամ գաղափար մը կազմել:

Ան կը ցուցնէ անխնայ, ճոճանակը եւլն. եւ կ'ըսէ, ասոնք այնպիսի խորհրդով ու հաշուով շինուած են, որ եթէ մէկը վրասալի՝ մեքենաները գործելէ կը դադրին:

Ժամագործութիւն չգիտնալուս համար այս-



62125-64

չափ բացատրութեամբ չենք կրնար գիտնալ ոչ զսպանակին, ոչ անխնեբուն, ոչ ճոճանակին ինչ կերպ դործելը կամ անոնց զօրութիւնները ու դարման պատճառները:

Սակայն սաչտիք լու կրնանք գիտնալ թէ ժամացոյցը խելքով, խորհրդով ու հաշուով շինուած առարկայ մըն է, օրուան ժամերը մեզ ցուցնելու ու գիտցնելու համար:

Ուրեմն ժամացոյցը շինուած է խորհրդաւոր նպատակի մը համար:

Ժամացոյցին այս խորհրդաւոր նպատակը կը տեսնենք առանց ժամագործութիւն գիտնալու, առանց ժամացոյցը շինողը տեսնելու:

Այս վիճակնուս մէջ եթէ մէկը մեզի ըսէ թէ՛ ժամացոյցը ինքնին շինուած է, ի՞նչ կը խորհինք այդ մարդուն վրայ:

Անշուշտ կը խորհինք թէ այդ անձը անմիտ մէկն է:

Որովհետեւ ինքնին լու կը համոզուինք թէ՛ այսպիսի խորհրդաւոր նպատակի մը համար շինուած ժամացոյցը խորհող միտք ունեցող, հոգի ունեցող մարդ էալը միայն կրնայ շինել:

Ժամացոյցը քիչ մը գիտելով երբ շինողը կը գիտնանք պէտք է երկինք նայինք՝ այն ահագին, մեծ ու անհուն զօրութիւն ունեցող մարմիններուն, որոնք են արեւը, լուսինը ու աստղերը:

Դիտենք աշխարհը ու իրեն մէջի եղած արա-

բաժները, մարդը, անասունները, թռչունները, սողունները, ծառերը ու բոյսերը:

Աստիք ամէնքն ալ բարձրագոյն ստեղծուածներ են, խորհրդաւոր նպատակներու համար, որոնց քով ժամացոյցը ոչինչ է. արեմն պէտք է այդ բարձրագոյն ստեղծուածներուն ստեղծողը գիտնալ որ է Աստուած:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ի՞նչ թուանշաններ կան ժամացոյցին ուզիլ կողմին վրայ—Ուրիշ ի՞նչ պաշտօն ունին—Ասեղներուն շարժումներուն պատճառը կրնանք հասկնալ ժամագործէն—Ինչօ՞ւ չենք կրնար ժամագործին բացատրութիւնները հասկնալ:

Ժամացոյցը ի՞նչպէս շինուած է որ եթէ մէկը վնասուի կը դադրի գործելէ—Ինչօ՞ւ չենք կրնար հասկնալ ժամագործին բացատրութիւնները—Սակայն ի՞նչ կըրնանք հասկնալ—Եթէ մէկը մեզի ըսէ թէ՛ ժամացոյցը ինքնին շինուած է, ի՞նչ կը խորհինք այդ անձին վրայ:

Ինչօ՞ւ ժամացոյցը ինքնին չկրնար շինուած ըլլալ—Ժամացոյցը գիտելով շինող մը ունենալը կրնանք գիտնալ, եթէ երկինք նայելով արեւը, լուսինը ու աստղերը կը տեսնենք ու աշխարհը և մէջի եղածները գիտելով ի՞նչ տեսակ նպատակ կը տեսնենք եւ օրքան պէտք է անոնց ստեղծողը գիտնալ:



ՊԼՈՒԹ Բ.

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԽՈՐՀՐԳԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ա Ր Ե Ի

Տե՛ս Արեւը՝ անիկա մեզի ջերմութիւն ու լոյս կը պարգեւէ:

Բայց գիտէ՞ք այն տաքութեան ու լոյսին ինչ աստիճան կենսական օգուտ ու կարեւորութիւն ունենայը:

Գիտէ՞ք որ եթէ Արեւ չըլլար՝

Ա. Մենք յաւիտենական մթութեան մէջ պիտի մնայինք:

Բ. Բան մը պիտի չաճէր ու կենդանութիւն պիտի չունենար:

Գ. Ծովերը, լիճերը ու ամբողջ ջուրերը և հեղուկ մարմինները պիտի սառէին:

Դ. Թանձր մարմինները կերպարանափոխ պիտի ըլլային ու պիտի աւրուէին և անպիտան ըլլային:

Ըսել է մէկ խօսքով աշխարհիս վրայ կեանք ու կենդանութիւն պիտի չըլլար, մարդ, անասուն, թռչուն, ծառ, բոյս գոյութիւն պիտի չունենային ու աշխարհս պարտապ անդունդ մը պիտի ըլլար:

Ուրեմն Արեւը իրեն տաքութիւնովը ու լոյսովը աշխարհիս ու ամբողջ տիեզերքին կեանք ու կենդանութիւն տալու նպատակաւ շինուած ու հոն երկնքին վրայ դրուած ու հաստատուած է:

Սակայն մեր խելքէն վեր է, չենք կրնա, ըմբռնել ու հասկնալ — որովհետեւ մենէ ծածկուած է հասկնալը — թէ՛

Ա. Աշխարհէս չորս հարիւր յիսուն հազար անգամ ծանր մարմին մը բանի մը վրայ չհաստատուած՝ ու բանէ մը չկախուած, ի՞նչպէս երկնքին վրայ ինքնին հաստատուն ու անկախ կեցած է:

Բ. Ի՞նչպէս այն կրակն ու լոյսը մշտնջենապէս շարունակ կը մնան:

Գ. Մեր աշխարհէն անհուն հեռաւորութիւն ունեցող տեղէ մը ի՞նչ զօրութեամբ է որ տաքութիւնը ու լոյսը 4-5 վայրկեանի մէջ մեր աշխարհը կը հասնին:

Ուրեմն տեսնելով Արեւը՝ հասկնալու է թէ՛ Աստուած ամենակարող է և թէ Անոր համար դժուար ու անկարելի բան չկայ բնու:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Արեւը մեզ ի՞նչ կը պարգեւէ — եթէ Արեւ չըլլար ի՞նչ պիտի ըլլային աշխարհը ու մէջի եղածներն:

Արեւը տաքութիւնով ու լոյսով ի՞նչ կ'ընէ տիեզերքը ու աշխարհը — ինչո՞ւ կարող չենք հասկնալ Արեւին անկախ կենալը, անոր կրակին ու լոյսին չմարիլը, այնչափ հեռաւորութիւնէ 4-5 վայրկեանի մէջ լոյսին ու տաքութեան հոս հասնիլը — ի՞նչ հասկնալու է անոր Ստեղծողին նկատմամբ:

Լ ՈՒ Ս Ի Ն

Արեւէն յետոյ էօղոյ լուսինը, աշխարհիս խիստ ծածկելու մտաւ մարմինը:

Լուսինը գիշերուան համար ստեղծուած ու մեծութեամբը կ'երևայ: սահմանուած է:

Լուսինը իր քաջոյ ձգտիչ զօրութեամբը, իրեննպատակն է աշխարհիս կեանքն ու կենդանու- կը քաջ սառնամանիքին ու խոնաւութեան աւել- թիւնը գիշեր ատեն պահպանելը: Եւ այսպէս արդիւնելով ա- նոնց չարիքը՝ կը պահպանէ աշխարհը:

Լուսինը իր ազօտ լոյսովը ու աղբեցութեամբը կը բարեխառնէ աշխարհիս օդը ու ջուրը:

Եթէ լուսին չըլլար գիշերա ին սառնամանիքը ու խոնաւութիւնը պիտի սառեցնէր ու ջնջէր ա- մէն արմտիքը, ծառերուն պտղները, ծաղիկները, բոյսերը և պիտի ապականէր աշխարհիս օդը ու ծովերուն և գետերուն ջուրերը:

Ուստի արեւը աշխարհի կեանք ու կենդանու- թիւն պարզեւորէ է: լուսինն ալ արեւին գիշեր- ուան բայակայութեան ատեն անոր գործոյը հըս- կողն ու պահպանողն է:

Մարդոյ ու արարածոյ համար օրուան աշխու- սութենէ յետոյ քուն ու հանգիստ սահմանուած է:

Քնանալու ու հանգստանալու համար մթու- թիւն ու լուսիւն սահմանուած է՝ այսինքն գի-

շեր, որ արեւին բացու- թեամբը կ'արեւի եղած է, յաջորդել անոր լուսինը որ շխանդարէր ոչ մթու- թիւնը և ոչ լուսիւնը:

Լուսինը աշխարհիս շարժը կը դառնայ՝ ամէն կողմ կը համի իր օգտակար աղբեցութիւնը գոր- անտեսանելի խօհ կ'ըլլայ և երբեմն ալ իր ամբողջ

Հեռեւարար լուսինին ստեղծման խորհրդա- իր ազօտ լոյսը, ձգտիչ զօրութիւնը անոր խոր- հըրդուար յատկանիշերն են խորհրդաւոր նպա- ատկին համար:

«Տէր, որքան խոր են քու խորհուրդներդ»:

Ասղմու

Հ Ս Ր Յ Ս Ր Ս Ն

Ինչ ու համար լուսինը գիշերուան համար ստեղ- ծուած է:— Եթէ լուսին չըլլար, ինչ պիտի պատահէին:

Լուսինը արեւին ինչ պաշտօնը կը կատարէ:— Մար- դոյ ու արարածոյ ինչ:— Ինչ ու երբեմն անտեսանելի կ'ըլլայ ու երբեմն ամբողջովին կ'երևի:— Ինչ է լու- սինին խորհրդաւոր նպատակը ու խորհրդաւոր յատկա- նիշը:

ԳԼՈՒԽ Ե.

Ա Շ Խ Ա Ր Հ

Աշխարհը ստեղծուած ու սահմանուած է մեր բնակութեան համար:

Գունդի ձեւ ըլլալով կը կոչուի երկրագունդ:

Աշխարհը երկու գլխաւոր տարրեր մարմիններէ բաղկացեալ է, հող և ջուր:

1. ՅԱՄԱՐ ԿՍՄ ՀՈՂ.

Յամարքին կամ հողին կ'ըսուի նաեւ երկիր որ յատկապէս սահմանուած է մարդոց, անասուններու ու թռչուններու բնակութեանը համար:

Եւկիրը կենդանութեան մայր կը կոչուի որովհետեւ իր վրայի բնակիչներուն ամէն պէտքերը կը հոգայ ու կը մտաակարարէ:

Մշակէ հողը ու պիտի տեսնես որ ամէն պիտոցքդ պիտի տայ:

Հողն է՝ մեր սննդեան հացը ու բոլոր ուտեստը տուողը. վասն զի հողն է բուսցունողը ցորենն, արմուիքը ու բանճարեղէնը որոնցմէ հաց կը շինենք և զանազան ուտելիքներ կը պատրաստենք:

Հողն է՝ ծառերն ու բոյսերը բուսցնողը որոնցմէ պատուղ ու ծաղիկ կը քաղենք:

Հողն է՝ մեծ ծառերն ու քարերը հասցունողը

որոնցմէ տուներ, պատեր ու պատասպարաններ կը շինենք:

Հողն է խտաբերն ու հունտերը բուսցունողը, որոնց վրայ անասունները կը ճարակին ու թռչունները իրենց կերը կը գտնեն ու ամէնքն ալ կը կշտանան: Անոնց մարմերէն, բուրդերէն ու փետուրներէն կը շինենք զարդեր, զգեստներ, կօշիկներ և ընդերքապէս հողը իբրեւ մայր, սննդատու է իր վրայ ապրող բոլոր բնակիչներուն:

Երբ հողը արեւին ջերմութենէն չորնայ, քարանայ ու անպիտանանայ, ամառնային անձրեւները ու ձմեռնային ձիւները կը հասնին քարացեալ վիճակէն լուծելու ու մէջը սնկուած ծառերուն, տունկերուն ու բոյսերուն արմատները զօրայնելու ու կենդանացնելու:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Որո՞ւ համար ստեղծուած է աշխարհը:— Ի՞նչ ձեւ ունի ու քանի տարբեր մարմիններէ բաղկացեալ է:— Յամաքը կամ հողը ուրիշ ի՞նչ կը կոչուի:— Ինչո՞ւ:

Ի՞նչ է ուրեմն հողը իր վրայի բնակիչներուն:— Երբ հողը արեւէն չորնայ ու քարանայ ի՞նչպէս կը լուծուի այս վիճակէն:



Երկրիս բնակիչներն են մարդիկ ընտանի եւ վայրի անատուններ ու զանազան թռչուններ:

Եթէ մարդ էակը տանջմէ զատելով անոր գործերը գիտես, պիտի տեսնես որ մարդն է երկրին տէրը ու իշխողը ու երկիրն ալ յատկապէս մարդուն համար ստեղծուած ու սահմանուած է:

Մարդն է երկիրը մշակողը, ցանոցը, հնձողը ու ուտեստ հայթայթողը:

Մարդն է ծառեր ու տունիկեր տնկողը, պտուղներ ու ծաղիկներ հասցնողը:

Մարդն է հեղինակը զանազան շէնքերու, ան է հանքեր բանեցնողը եւ երկաթ ու զանազան նիւթեր հանելով իր պէտքին դործածողը:

Վերջապէս մարդն է որ իւր արտադրութիւններու աւելցած մասը ուրիշ հեռաւոր երկիրներու արտադրութեանց աւելորդին հետ կը փոխանակէ:

Եւ մարդը իր հոգեկան գորութեամբը, գիտութեանց ու արուեստներու մէջ յառաջդիմելով փոխանակութեան ու յարաբերութեան գիւրութիւններ կ'ստեղծէ՝ շոգենաւեր, շոգեկառքեր ու ուրիշ տեսակ տեսակ անհամար գիւտեր ընելով:

Այս ամէնուն մէջ երկիրը մարդուն ուզածը ու անոր կարօտ եղածները կը բովանդակէ:

Եթէ անատունները ու թռչունները մարդ էակէն բաժնելով անոնց վրայ առանձին խորհինք պիտի տեսնենք որ՝ ասոնք մարդուն օգտին, պի-

տոյիցը, ծառայութեանը եւ հաճոյքին համար ստեղծուած արարածներ են:

Տե՛ս ձին ու եզր, ինչ ծառայութիւններ կ'ընեն երկիրը հերկող ու հունձքը փոխադրող մարդուն:

Տե՛ս շունը, ինչպէս կը ծառայէ մարդուն ինչքին ու կենացը:

Տե՛ս թռչունները, ինչպէս կ'երգեն ու հաճոյք կը պատճառեն մարդուն:

Վերջապէս ամէն անատուն ու թռչուն մարդուն այլ եւ այլ պէտքերուն ու ծառայութիւններուն համար ստեղծուած ու սահմանուած են:

Իսկ վայրի դաղանները, առիւծը, վագրը եւն, խիտ հազուագիւտ են եւ մարդուս բնակութեան փնտասկար ու անյարմար տեղեր միայն կը բնակին:

Վայրի կենդանիներու բնակած տեղերը թէ խիտ տաք են եւ թէ ճախճախտ ու մացառօտ, ուր մարդուս բնակութեան համար մահաբեր է:

Այսպէս են նաև թունաւոր սողուններուն ու իժերուն բնակած տեղերը:

Կարծես ասոնց սարսափն է որ մարդս կ'զգուշայնէ այնպիսի մահաբեր տեղեր բնակութիւն հաստատելէ:

Եւ երբ մարդ կարող ըլլայ այն տեղերը բնակութիւն հաստատել՝ այն ատեն անոնք ալ այն տեղերէն կը հեռանան ու կ'անյայտանան:

Նոյնպէս փաստկար եւ ձանձրացուցիչ սրգերը, ճճիներն ու միջատները կ'զգուշացնեն մարդս չբնակիլ այն տեղերն ուր իրենք կը դանուին բնակութեամբ:



Ոմանք իրենց գարչահոտութեամբ, ոմանք զզուանք պատճառելով և ոմանք վնասակարութեամբ կ'ստիպեն մարդս դէպ ի աշխատութիւն ու մաքրութիւն:

Վասն զի աշխատութեամբ մեր բոլոր պէտքերը ձեռք պիտի բերենք ու մաքրութեամբ պիտի արգիլենք հիւանդութիւնները:

Ուրեմն հանգիստ ու առողջ ապրելու համար պէտք է սիրենք աշխատութիւնն ու մաքրութիւնը:

Հ Ա Ր Ց Ա Ր Ա Ն

Որո՞նք են երկրին բնակիչները:—Եթէ մարդ էակին գործերը գիտես ի՞նչ պիտի գտնես զայն:—Մարդը ի՞նչ կ'ընէ երկիրը:—Ուրիշ ի՞նչ էր:

Մարդ հագեկան զօրութեամբ ինչե՞ր ընելու կարող է:—Երկիրը կը բովանդակէ՞ ուղածներնիս:—Անասուններուն վրայ եթէ առանձինն խորհինք ի՞նչ կը գտնենք զանոնք:—Ձին, եղը, շունն ու թռչուններն ի՞նչ ծառայութիւն կ'ընեն մարդուն:

Վերջապէս անասուններն ու թռչունները ի՞նչ բանի համար ստեղծուած են:—Վայրի գազանները, սողունները ու իժերը ո՞ւր կը բնակին:—Երբ մարդ ասոնց տեղերը հաստատուի՞ անոնք ի՞նչ կ'ընան:

Վնասակար ու ձանձրացուցիչ որդերը, ձճիներն ու միջատներն ի՞նչպիտի տեղեր կը բնակին եւ ի՞նչ ազդեցութիւն կ'ընեն մարդուն:—Աշխատութիւնն ու մաքրութիւնն ինչո՞ւ պէտք է եւ ի՞նչի օգտակար են:

3. ԾՈՎ ԿԱՄ ԶՈՒՐ

Աշխարհիս հինգ մասին միայն երկու մասը ցամաք ու երեք մասը ծով է:

Ըսել է ծովը կամ ջուրը շատ՝ ու ցամաքը քիչ է: Մարդիկ կը բնակին ու կ'ապրին ցամաքին վրայ:

Բայց ծովն ալ անհրաժեշտ պէտք ըլլալուն ստեղծուած ու սահմանուած է:

Արեւը իր ջերմութիւնովը ծովին ջուրերը նախ շոգիի, յետոյ շոգիէն ամպի և ամպէն անձրեւի կը վերածէ ու ցամաքը կը ջրէ, լիճեր ու գետեր կը կազմէ:

Եթէ անձրեւը չըլլար՝ ցամաքին կամ հողին վրայի եղած խտտերը, ծառերն ու բոյսերը ոչ պիտի բուսնէին և ոչ պիտի մեծնային. Արեւին ջերմութէնէն պիտի այրէին ու չորնային:

Բոլոր մարդիկ և թէ անասուններն ու թռչուններն պէտք ունին ջուրի, թէ՛ խմելու և թէ՛ մաքրուելու համար:

Բայց ասկէ զատ՝ ծովը ցամաքին համար ուրիշ խորհրդաւոր օգուտներ ալ ունի:

Նախ՝ ծովին այեկոծութիւնը աշխարհիս քրջապատած օդը կը զտէ ու կը մաքրէ:

Երկրորդ՝ ծովը նաւարկելի ըլլալուն պատճառաւ, իրարմէ հեռու եղած երկիրներուն յարաբերութիւններն ու բերքբու փոխանակութիւնները կը դիւրացնէ ու կը մօտեցնէ:

Մովին՝ ցամաքէն շատ բլլալն ալ խորհրդաւոր նպատակաւ ստեղծուած ու սահմանուած է:

Վասն զի ցամաքին պահանջածին համեմատ թէ շատ քանակութեամբ պէտք է շոգի պատրաստել և թէ լայնածաւալ երկրագունդին օդը իր ընդարձակութեամբը մտքերը:

Հ Ա Ր Ց Ա Ր Ա Ն

Աշխարհիս քանի՞ մասը ծով ու քանի՞ մասը ցամաք է:—Ո՞րն է շատը:—Մարդիկ ո՞ւր կը բնակին:

Ի՞նչ է ծովին կարեւորութիւնը:—Ի՞նչ պիտի բլլային եթէ անձրեւ չբլլար:—Ուրիշ ի՞նչ օգուտ ունի ծովը:

Ուրիշ ինչ օգուտ ունի:—Մովին ցամաքէն շատ բլլալուն խորհրդաւոր նպատակները որո՞նք են:

4. 0 Գ

Օդը ամբողջ երկրագունդը շրջապատած անոսր ու անտեսանելի մտքին մ'է:

Մեր մէջէն շատեր չեն գիտեր օդին կենսական օգուտները. կը կարծեն թէ՛ միայն շունչ առնել տարու համար սահմանուած քան մ'է:

Օդը շնչառութեամբ մեր թոքերուն մէջ գրտնուած հիւթը արեան կը վերածէ ու մեր արիւնը կը սորոգէ:

Օդը ձայնը լսելի ընել կուտայ, լոյսը կը ցոլայնէ ու հոտը կը տարածէ:

Օդը պատճառն է անձրեւի որ ծովի ջուրին աղը չթողուր շոգիանալ և անուշ ջուր կը պարգեւէ:

Օդը կը նպաստէ թռչուններուն՝ որանք իրենց թեւերով կը բարձրանան դէպ ի վեր:

Հետեւաբար եթէ օդ չբլլար՝

Մնունդէ գոյացած հիւթը՝ կենսատու արեան պիտի չվերածուէր և մեր արիւնը՝ պիտի չնորոգուէր:

Չայն գոյութիւն պիտի չունենար ու ձայնի վրայ գաղափար պիտի չունենայինք:

Արեւուն ճառագայթներուն լոյսը ամէն տեղ հաւասար պիտի չտարածուէր և տեղ մը լոյս ու տեղ մը մութ պիտի բլլար:

Անուշահոտութեան ու գարշահոտութեան վրայ գաղափար պիտի չունենայինք, վասն զի օդն է հոտը տարածողը:

Անձրեւ չպիտի բլլար և երկիրը անուշ ջուրի վտարիկ կաթիլներով պիտի չտոտոգուէր ու բոյսերուն աճումը պիտի գազրէր:

Թռչունները պիտի չկրնային թռիլ, վասն զի թեւերին օդին բաղխելով է որ կը բարձրանան:

Հով գոյութիւն պիտի չունենար, վասն զի օդին տեղէ տեղ փոխուելէն (որ տաքութենէ և սալուածութենէ կը պատճառուի) հով կ'բլլայ:

Նոյնպէս եթէ օդ չբլլար պիտի չկրնայինք մեր մարմնոյն ծանրութիւնը կրել, ոչ քարել և ոչ ալ վաղել:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ի՞նչ է օգըր—Շատեր ի՞նչ կը կարծեն օգըր—Օգըր ի՞նչ կ'ընէ մեր թոքերուն մէջի հիւթըր—Ի՞նչ կ'ընէ ձայնը, հոտըր—Թոչուններուն թեւերուն ի՞նչ օգուտ ունի—Եթէ օգ չըլլար ի՞նչ պիտի ըլլային հիւթըր, ձայնը ու լոյսը:

Եթէ օգ չըլլար անուշ ջուր պիտի ունենայինք:—Թոչունները պիտի կրնային թռիլ:—Հով գոյութիւն պիտի ունենա՞ր:—Մենք պիտի կրնայինք քալել ու վազել:




Ն Ե Ր Ա Կ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն




Այս գրուածներէն կը համոզուիմք թէ ցամաք, ծովը, օդը, անասունները, բոչունները ու ծովին մէջի կերպ կերպ ձուկերը, կեանք տուող արեւը ու լուսինը մարդ էակին համար ստեղծուած ու սահմանուած են:

Ի՞նչ գերագոյն սէր եւ ի՞նչ բարձրագոյն պատիւ մարդ էակին:



Գ Լ Ո Ւ Ի Թ Զ.

ԱՄԵՆԱԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՄԵՆԱԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ



Ա. ՈՉՆՉԷ ԳՈՅՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԱՍԵՂԾՈՒՄ

Ինչպէս տեսաք, ժամացոյցը յատուկ նպատակի մը համար շինուած է՝ այսինքն ժամանակը ցուցնելու:

Նոյնպէս տեսաք թէ տիեզերքին մէջ եղած այն ամէնը՝ ինչպէս՝

Արեւը՝ տիեզերքին կեանք ու կենդանութիւն տալու նպատակաւ ստեղծուած է:

Հուսինը՝ արեւին բացակայութեան ատեն մասամբ անոր պաշտօնը կատարելու նպատակաւ:

Աշխարհը՝ մարդուն բնակութիւն ըլլալու նպատակաւ:

Օգըր ու ջուրը՝ աշխարհի մասնաւոր կենսատու պէտքերն հայթայթելու նպատակաւ:

Անասուններն ու թռչունները՝ մարդուն պէտքերուն օգնելու և աշխարհի արտադրութիւններն՝ մեր սննդեանը, հազուապէս ու պահպանութեան պէտքերը լեցնելու նպատակաւ:

Վերջապէս ամէն բաները որ կը տեսնենք մասնաւոր նպատակի համար ստեղծուած ու սահմանուած են:

Չկայ բան մը որ մասնաւոր նպատակի մը համար ստեղծուած ու սահմանուած չըլլայ:

Կարելի է գտնուին այնպիսի բաներ որ մենք  
դեռ հասկցած չըլլանք անոնց ինչ նպատակաւ  
ստեղծուած ըլլալը:

Երկնքի ու աշխարհի այս մեծագործութիւններ  
ուն առջեւ կը տեսնէք թէ մարդուն շինած ժա-  
մացոյցը ամենաչնչին գործ մ'է:

Բայց այն՝ նպատակով մը շինուած ըլլալուն  
գաղափարը տալու համար յիշեցինք:

Ասկէ զատ ժամացոյց շինողը՝ երկրին արտա-  
գրած նիւթերովը կը շինէ զայն:

Մինչ արեւը, լուսինը, աստղերն ու երկնից լու-  
սաւորները, աշխարհը իր ամբողջութիւնով ոչնչէ  
շինուած ու ստեղծուած են:

Արեւը, լուսինը, աստղերն ու մարդակները բա-  
նէ մը չլիախուած ու չբռնուած, երկնքին վրայ  
կեցնելու ու շարելու կարող՝ ու անոնց ամէն մէ-  
կուն զատ զատ զօրութիւն, շարժում ու ընթացք  
տուող այն Ամենագերագոյն ԷՍԿԸ կարող է զա-  
նոնք ոչնչէ ստեղծել: Վասն զի Ամենակարող է:

Աշխարհը, ցամաքը, ծովը, օդը, տեսակ տեսակ  
անասուններն ու թռչունները, ծառերն ու բոյսե-  
րը, և ամէն ինչ շինելու, շարժեցնելու, աճեցնելու  
ու զատ զատ նպատակներու ծառայեցնելու կարող  
Ամենագերագոյն ԷՍԿԸ՝ կարող է նաեւ ոչնչէ զա-  
նոնք ստեղծել, վասն զի Ամենակարող է:

Ինչպէս որ իր Ամենակարողութեանը նոյնպէս  
և իր Ամենախմաստութեանը չափ ու սահման  
չկայ:

Անոր Ամենակարողութիւնը ու Ամենախմաստու-  
թիւնը կ'երեւայ թէ՛ ամենամեծ եւ թէ՛ ամենա-  
փոքրիկ գործերու մէջ:

Նայէ՛, դիտէ՛, ինչ որ կ'ուզես, մեծ կամ փոքր,  
Անոր Ամենակարողութիւնը ու Ամենախմաստութիւ-  
նը բացայայտ կ'երեւի:

Դիտէ՛ սա թռչունը որ ամէն օր կը տեսնես,  
դիտէ՛, քննէ՛, ինչպիսի Ամենակարողութիւն ու  
Ամենախմաստութիւն պիտի գտնես երբ զննես ա-  
նոր թեւերը, սաքերը, ձեւը ու կազմուածքը:

Օդէն թեթեւ փետուրներէ թեւեր շիներ է որ  
օդը կարենայ զայն վերցնել ու թռիլ:

Ուրբերը այնպիսի հաշիւով ու ձեւով շինուած  
են որ կարենան ծառերուն ճիւղերը բռնել ու  
վրան թառիլ, կամ նստիլ ու հանգչիլ:

Ոսկորները բարակ ու մէջը պարսպ շինուած  
են, թեւերուն օդին մէջ վերցնելիք զօրութեան  
համեմատ:

Թեւերուն նուրբ փետուրները պահպանելու  
համար տեսակ մը խեժ դրուած է բնականէն,  
իրար կցեալ ու տոկուն ընելու համար:

Բոլոր թռչունները օդին մէջ թռելու համար  
ինչ բան որ պէտք է ամբողջը կատարելապէս ունին:

Յամաքի վրայ քարոյ չորքոտանիներն ու երկու-  
տանիներն ինչ բանի որ պէտք ունին ամբողջը  
կատարելապէս ունին:

Ջուրին կամ ծովին մէջ ապրելու համար ամէն  
տեսակ ձուկերը, լողալու համար ինչ որ պէտք է,  
ամբողջը կատարելապէս ունին:

Աստուածային Ամենակարողութեան ու Ամենա-  
խմաստութեան առջեւ մենք ամենատկար արա-  
րածներ ենք:

Մեր կարողութիւնը խիստ քիչ ու սահմանա-  
փակ է, անոր համար չենք կրնար գիտնալ թէ  
ի՞նչպէս բան մը ոչնչէ՛ կարելի է ըլլալ կամ ստեղ-  
ծել:

Բայց և այնպէս կրնանք հասկնալ որ այսպիսի  
անհուն զօրութեան տէր Ամենակարող ու Ամենա-  
խմաստուն էակը՝ կարող է ոչնչէ՛ կամ ըսկ խօսքով  
ալ ստեղծել:


Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ժամացոյցը ի՞նչ նպատակաւ շինուած է:—Արեւը  
ի՞նչ նպատակիւ—Լուսինը ի՞նչ:—Աշխարհը:—Օդն ու  
ջուրը:—Անասուններն ու թռչունները:—Աշխարհի ար-  
տադրութիւններն ի՞նչ նպատակաւ:—Կա՞յ բան մը որ  
նպատակի մը համար ստեղծուած չըլլայ:—Ի՞նչ է ժա-  
մացոյցը եւ երկինքի ու աշխարհի մեծագործութեանց  
առջեւ ի՞նչ կարեւորութիւն ունի:—Ժամացոյցը ինչէ՞  
շինուած է:—Երկինց լուսաւորները ու աշխարհ ինչէ՞:


Ինչո՞ւ ստեղծողին Ամենակարող կ'ըսենք:—Չափ ու  
սահման կա՞յ իր Ամենակարողութեանը եւ Ամենախ-  
մաստութեանը:—Ո՞ր կ'երեւին ասոնք:—Քննէ՛ փոքրիկ  
թռչունին թևերը ի՞նչպէս շինուած են:—Ոտքերն ու  
ոսկորները ի՞նչպէս:—Փետուրներուն խիժն ինչո՞ւ հա-  
մար է:—Պակաս մը կայ թռելու համար:

Չորքօտանիներն ու երկօտանիները իրենց պէտքերն

ամբողջ ունին:—Մենք ստեղծողին առջին ի՞նչ տեսակ  
արարածներ ենք:—Կրնա՞նք գիտնալ ստեղծումը:—  
Կրնա՞նք հասկնալ թէ այնպիսի անհուն զօրութիւն ու-  
նեցող էակը կրնայ ոչնչէ՛ ալ ստեղծել եւ ի՞նչպէս:



ՊԼՈՒԻՒ Է.



Բ. ԻՐ ՆՄԱՆԸ ՅԱՌԱՋ ԲԵՐԵԼ

Ամենակարող ու Ամենախմաստուն էակը տեսակ  
տեսակ սերմ՝ շնորհեր է իր նմանը յառաջ բերելու:

Այս սերմով ասանք կրնան իրենց նմանը յառաջ  
բերել:

Այս սերմերը ծնած ատեննին հետերնին ունին  
ու որոշեալ ժամանակէ մը կը հասունանան ու կը  
զօրանան:

Այս սերմերը կերպ կերպ են, ունանք հաւկիթ,  
ոմանք կուտ, ոմանք ալ ուրիշ տեսակ:

Բայց ամէնքն ալ խիստ խնամով զետեղեալ ու  
մասնաւորապէս յատկացեալ են իր նմանները ա-  
ռաջ բերելու համար:

Այնպէս որ հաւերուն հաւկիթէն անպատճառ  
հաւ առաջ կուղայ:

Բաղին հաւկիթէն անպատճառ բաղ՝ սաղին  
հաւկիթէն անպատճառ սաղ առաջ կուղայ:

Այս օրէնքին տակ են նաև բոլոր անասունները:

Չիէն անպատճառ ձի, կատուէն անպատճառ կատու, շունէն անպատճառ շուն կը ծնանի կամ առաջ կուգայ:

Այս օրէնքին տակ են նաև ձուկերը, թռչունները ինչպէս նաև ծառերը, սունկերը և բոլոր բոյսերը:

Այս օրէնքին մէջ ոչ վերիպում կայ ու ոչ ալ բացառութիւն կամ զեղծում:

Ասիկայ Ամենակարող և Ամենախմաստուն էակին օրէնքն է:

Բայց որքան անհուն տարբերութիւն կայ սերմին ու անկէ առաջ եկած առարկային մէջ:

Բնաւ իրարու նմանութիւն չունին ու մարդուս հաւատալը չգար երբ տեսնէ անոնց անհուն տարբերութիւնը:

Օրինակի համար առ խնձորին կուտը, հաւին հաւկիթը ու բաղդատէ կուտը խնձորին հետ ու հաւկիթը հաւին հետ:

Ի՞նչ անհուն տարբերութիւն ու աննմանութիւն: Բայց և այնպէս այն հաւկիթէն յառաջ կուգայ վառեակը որ մեծնալով հաւ կ'ըլլայ:

Նոյնպէս է նաև խնձորին կուտը որ հողին մէջ թաղուելով կը բուսնի, խնձորի ծառ կ'ըլլայ, խրնձոր առաջ կը բերէ:

Մեր կարողութենէն վեր է գիտնալը թէ ինչպէս հաւկիթին մէջ վառեակ կը գոյանայ:

Ու այդ վսրբիկ աննշան խնձորին կուտը ինչպէս հողին մէջէն կ'աճի ու ծառի կը վերածուի:

Եւ այդ ծառն ալ կանգուն պահելու համար ինչպէս հողին մէջ ընդարձակ արմատներ կը ձգէ զանազան ձեւերով:

Յետոյ այդ ծառը ինչպէս ծաղիկ կուտայ ու խնձորը առաջ կը բերէ:

Ասիկայ մեր աչքին սուղին կ'ըլլայ ու չենք կրնար վերահասու ըլլալ:

Վասն զի մեր կարողութիւնը խիստ քիչ աննշան ու սահմանափակ է:

Սակայն կրնանք երեւակայել ու հասկնալ որ այսպիսի գործ մը ընելու զօրութիւն ունեցող Ամենակարող ու Ամենախմաստուն էակը կարող է մինչեւ անգամ ոչնչէ գոյութիւն տալ մի միայն խօսքով: Տես Ծ՛ննդոց Գլ. Ա. 29—31:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ի՞նչ շնորհեալ է նմանը յառաջ բերելու համար:— Այս սերմերը ե՞րբ կ'ունենան ու կը հասունանան—Ի՞նչ տեսակ եւ:— Ինչպէս զետեղուած:— Հաւին հաւկիթէն ի՞նչ առաջ կուգայ:— Բազին հաւկիթէն ի՞նչ, սագին հաւկիթէն ի՞նչ:— Ո՞վ կան այս օրէնքին տակ:— Ուրիշ որո՞նք:— Ի՞նչ տեսակ օրէնք է աս, եւ որո՞ւ օրէնքն է:— Բաղդատէ ներմը առաջ գալիքին հետ, խնձորին կուտը խնձորին հետ, հաւկիթը հաւին հետ:— Ի՞նչ պիտի գանեալ:— Հաւկիթէն ու խնձորի կուտէն ի՞նչ յառաջ կուգայ:— Կրնա՞նք ասոնց գոյութիւնը հասկնալ:— Այլ ի՞նչպէս կրնանք երեւակայել:

Գ. Ա Ճ Ո Ւ Մ

Ամենակարող ու Ամենախմաստուն Էսակին հրաշալեաց կարգէն է նաև, մարդիկներուն, անասուններուն, թռչուններուն, ձուկերուն, ծառերուն ու բուսեղինաց ինքնին ածուժը կամ մեծնալը:

Ասոնք փոքրիկ անկարող ու տկար, ծնունդ կ'առնեն ու հետզհետէ աճելով՝ իրենց սահմանեալ մեծութեանը կը հասնին:

Ո՛վ կր՛աչ հաւատալ՝ եթէ փորձով ահոսած ու գիտցած չըլլար որ նորածին, փոքրիկ ու անկարող մանկիկը պիտի կրնար ինքնին հետզհետէ մեծնալ ու կարողութիւն ստանալ:

Բայց կը աեսնենք թէ՛ այդ նորածին փոքրիկ մանկիկը հետզհետէ կամաց կամաց հինգ, վեց ամս գամ աւելի մեծցած ու աճած է, իր ներքին եւ արտաքին ամբողջ մասերովը ու զօրութիւնովը:

Տե՛ս շունին, կատուին կամ սև է կենդանիի մը ձաղը. փոքրիկ ու անկարող, որ հազիւ կրնայ շարժիլ:

Բայց ձգէ զայն ժամանակ մը ու յետոյ տե՛ս թէ ինչ հասակի, ինչ կարողութեան ու զօրութեան հասած է:

Այսպէս են նաև ամբողջ բուսեղէնները:

Գիր փոքրիկ աննշան սերմ մը հողին մէջ, քիչ ատենէն այդ սերմէն շուշեր առաջ պիտի դան հողէն դուրս բուսնելով:

Որոնք հետզհետէ աճելով կոճղի պիտի վերածուին:

Այդ կոճղէն նորէն կամաց կամաց սոսեր, ճիւղեր ու տերեւներ առաջ պիտի դան ու պիտի ըլլայ ծառ:

Վերջապէս այդ ծառը այն պտուղը պիտի տայ ինչ որ էր սերմը:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Որոնք ինքնին կ'աճին եւ ի՞նչպէս կ'աճին.— կրնայի՞ր հաւատալ այս աճման եթէ տեսած չըլլայիր.— նորածին մանկան եւ կենդանիներու ձագերուն մեծնալը.— ժամանակէ մը ի՞նչպէս կ'աճին.— Հողին մէջի սերմանած սերմը նախ ինչի՞ կը վերածուի ու ինչե՞ր պիտի ունենայ: — Վերջապէս ի՞նչ պիտի տայ:

ՊԼՈՒԹ Թ.

Դ. ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ

Ամենակարող ու Ամենախմաստուն Էսակը մարմնին բոլոր անդամներուն ուղղակի կապակցութիւն շնորհեր է իր ընելիք գործողութեանց հետ:

Այս կապակցութեան զօրութեամբն է որ մարմննայն անդամները գիւրութեամբ ու կատարելապէս



կը գործեն իրենց յատկացեալ մասնաւոր գործու-  
ղութիւնները:

Մարդերուն, անասուններուն, թռչուններուն ու  
ձուկերուն բերանները, լեզուները ու ակռաներնին  
ինչ ձեւով ու ինչ զօրութեամբ ալ կազմուած ու  
չինուած ըլլան՝ կապակցութիւն ունին իրենց ու-  
տելիքին ձեւին ու տեսակին հետ:

Աչքերը կապակցութիւն ունին ձեռքերուն գոր-  
ծերուն վրայ ու ոտքերուն գայած տեղին վրայ:

Մայրական ստինքները կապակցութիւն ունին  
մանուկին կամ կենդանեաց համար՝ ձագերուն շր-  
թունքներուն ու լեզուներուն հետ:

Սագին, բազին ու ուրիշ ջուրի վրայ լողալու  
յատկացեալ կենդանիներուն թիալարիչ ոտքերը  
կապակցութիւն ունին ջուրին վրայ դիւրութեամբ  
լողալու հետ:

Կարապին, հաւալուսին և ուրիշ ջուրերուն տա-  
կէն ուտելիք ճարող կենդանիներուն երկայն պա-  
րանոցները կապակցութիւն ունին ջուրին մէջ խո-  
րասուզուելով իրենց ուտելիքը գտնելուն հետ:

Ուղալին ոտքերն ու գրեթէ բոլոր մարմինը կա-  
պակցութիւն ունին աւազուտ անապատներուն  
վրայ մարդոց ծառայութիւն ընելուն հետ:

Միթէ կարելի՞ է սարակուսիլ թռչուններուն  
թեւերուն օդին հետ ու ձկան թեւերուն ջուրին  
հետ յայտնի ու ուղղակի կապակցութիւն ունե-  
նալուն վրայ:

Կապակցութիւն նաև ձուկերուն կազմուած քն

ծովին հետ ու ցամաքի վրայ ապրող կենդանիներ-  
րունը հողին հետ:

Կապակցութիւն գիշերը քունի հետ ու եղա-  
նակներու փոփոխումը կազմութեան հետ:

Այսպէս թէ ընդհանուր և թէ մասնաւոր կա-  
պակցութիւններ կան ամբողջ կենդանական ու  
բուսական գործարանաց մէջ:

Ասոնք թուելը շատ երկար կ'ըլլայ, ուր որ նա-  
յիս ու ինչ բան որ դիտես ու քննես, այն ասեմ  
կապակցութիւնները յայտնի կ'երեւին:

Սովորութիւն ըրէ՛ ուշադիր ըլլալ այն կապակ-  
ցութիւններուն՝ ան ժամանակ հիանալով պիտի  
տեսնես Ստեղծողին Ամենակարողութիւնը ու՝ Ա-  
մենախմաստութիւնը:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Կապակցութիւն ըսելով ի՞նչ կը հասկնանք:— Բե-  
րանը:— Լեզուն ու ակռաներն ինչի՞ հետ կապակ-  
ցութիւն ունին:— Աչքերն ինչի՞ հետ:— Ստինքներն  
ինչի:— Բազին, սագին ու ուրիշ ջուրի վրայ լողացող  
կենդանիներուն ոտքերն ի՞նչպէս են:— Կարապին ու  
հաւալուսին կտուցը ի՞նչպէս է ու ինչո՞ւ համար է:—  
Ուղալին ոտքերն ու մարմինը ի՞նչպէս է:— Պատմէ թէ  
ի՞նչ կապակցութիւն ունին թեւերն օդին ու ջուրին  
հետ:— Չուկերուն կազմուածքն ջուրի հետ ու կենդա-  
նիներունը հողին հետ:— Ի՞նչպէս են կապակցութիւննե-  
րը:— Ի՞նչ են թէ շատ:— Պէ՞տք է ուշադիր ըլլալ կա-  
պակցութիւններու:— Ի՞նչ կը յայտնեն անոնք:

ՊԼՈՒԽ Ժ.

Ե. ՓՈՒԱՐԻՆՈՒԹԻՒՆ

Փոխարինութիւնը կապակցութեան մէկ տեսակն է:

Փոխարինութիւնն է երբ բանի մը մասի մը կամ գործիքի մը պակասութիւնը ուրիշ բանով, մասով մը կամ գործիքով մը լեցուած է:

Մամուկին ոտայնը փոխարինութիւն մ'է թեւերու, վասն զի մամուկը թեւ չունի:

Առանց թեւ ունենալու ի՞նչպէս պիտի բռնէր թեւաւոր ճանճը որ իր կերակուրն է. գժուար ու անկարելի պիտի ըլլար:

Բայց ահաւասիկ թելերէ շինուած ոտայնը՝ սրով մամուկը՝ ճանճը գիւրութեամբ կ'որսայ առանց անոր ետեւէն թռելու համար թեւերու պէտք ունենալու:

Ուրեմն մամուկին ոտայնը փոխարինութիւն է թեւերու:

Խիտունջը ոչ ոտք ունի ոչ թեւ և ոչ ալ մամուկի պէս ոտայն հիւսելու կարողութիւն:

Ասոնց փոխարէն մարթէն տեսակ մը ստիճի նման մածուցիկ հիւթ մը կ'արտադրէ:

Ու այս հիւթին փակչողական զօրութեամբը ուղած տեղերը կ'երթայ կուգայ սուր ու թեւ ունենալու պէս:

Ծառերէն, պատերէն ու ամէն տեսակ խորտուբորտ տեղերէ վեր կ'ելլէ ու կ'իջնայ այս հիւթին զօրութեամբը:

Ուրեմն խիտունջին այս մածուցիկ հիւթը փոխարինութիւնն է թեւերու ու ոտքերու:

Սողացող անասուններուն սողալու զօրութիւնը փոխարինութիւնն է ոտքի ու թեւի պակասութեան:

Փղին կնճիթը փոխարինութիւնն է կարճ ու անշարժ պարանոցին պակասութեանը դէմ:

Վասն զի կարճ ու անշարժ պարանոցը ոչ պիտի կրնար ս և է կողմ շարժել ու ոչ ալ գետինը հասցընելով բան մը առնել:

Բայց ահաւասիկ այս պակասները լեցնելու համար կնճիթը փոխարինուած է՝ որ ուղած կողմը կը շարժէ ու գետնէն ուղածը կ'առնէ:

Ասոնց նման անհամար փոխարինութիւններ կան:

Ուշադիր եղի՛ր, քննէ՛, ու պիտի տեսնես թէ ուր որ գործիքի մը պակասութիւն կայ Ամենակարող ու Ամենախմաստուն Արարիչը ուրիշ գործիքով այն պակասը փոխարինած ու լրացուցած է:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ի՞նչ է փոխարինութիւնը:—Մամուկին ոտայնը ինչի՞ փոխարինութիւնն է:—Խիտունջին մածուցիկ հիւթը ինչի՞: Սողալու զօրութիւնը ինչի՞ փոխարինութիւնն է:—Փղին կնճիթը ինչի՞:—Կա՞ն շատ փոխարինութիւններ:—Ամէն գործիքի պակաս ի՞նչպէս ու ո՞վ լրացուցած է:



ՄԱՐԴՈՒՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Մարդը իր չափը պէտք է ճանչնայ վասն զի՝  
Մարդս չկրնար ոչնչէ նիւթ մը գոյացնել :

Մարդս չկրնար առանց նիւթ մը ունենալու  
ժամացոյց կամ ու է առարկայ մը՝ բան մը շինել :

Մարդ չկրնար իր շինած ժամացոյցէն նոր ժա-  
մացոյցներ յառաջ բերել առանց աշխատութեան :

Մարդ չկրնար իր շինածին աճուստայ որ ինք-  
նիրեն մեծնայ և ոչ ալ առանց շարժիչ նիւթի  
շարժում կրնայ տալ :

Թէպէտեւ մարդ ըլլայ բարձր ու գերազոյն ա-  
րարած մը աշխարհիս վրայ գտնուած արարածոց մէջ :

Բայց և այնպէս մարդս իր Ստեղծողին առջին  
ամենատկար ու անկարող էակ մ'է :

Թէև ժամացոյց, շողենաւ, շողեկաւք ու ասոնց  
նման առարկաներ կրնայ շինել ու գիւտեր ընել  
բայց այն կարողութիւնը անգամ Ամենակարող ու  
Ամենախմաստուն էակը՝ Աստուած շնորհած է իրեն :

Ուստի Ստեղծողին և իր խորհրդագործու-  
թեանց վրայ մարդ խոնարհաբար խորհելու է մի-  
այն սորվելու նպատակաւ :

Որովհետեւ որչափ ապրինք այնքան շատ  
սորվելիք բաներ ունինք :

Եթէ պատահիք այնպիսի բանի մը՝ որ տար-

րինակ երեւի ձեզ, անիկա տարօրինակ ու անխոր-  
հուրդ չէ, հապա ձեզ այնպէս կ'երեւայ :

Որովհետեւ Ամենակարողին արարչագործու-  
թիւնները անթուելի են ու իրարմէ տարբերու-  
թիւնը անհասանում :

Հետեւաբար մարդ պէտք է իր աչքին առջին  
ունենայ ու գիտնայ իր կարողութիւնը՝ որ խիստ  
նուազ ու սահմանափակ է :

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Մարդ ինչո՞ւ իր չափը գիտնալու է։—Կրնայ ոչնչէ  
նիւթ գոյացնել, կրնայ առանց նիւթի ժամացոյց ու  
ժամացոյցէ ժամացոյց յառաջ բերել կամ կրնայ շինածին  
աճուստալ։—Ուրեմն ի՞նչ է իր կարողութիւնը Ստեղ-  
ծողին առջեւ։—Իր շինածներուն անգամ կարողութիւն  
տուողը ո՞վ է :

Մարդ Ստեղծողին և Անոր գործոց վրայ ի՞նչպէս ու  
ի՞նչ նպատակաւ խորհելու է։—Ինչո՞ւ։—Տարօրինակ բան  
կայ արարչագործութեանց մէջ։—Ինչո՞ւ։—Հետեւաբար  
մարդ իր կարողութեանը աստիճանը լաւ գիտնալու է :

ԱՍՏՈՒԱԾ

Մինչև այս տեղ սորվեցաք թէ՛ արեւը լուսի-  
նը ու աստղերը զատ զատ նպատակներու կամ  
պաշտօններ կատարելու համար գիտամամբ ստեղ-  
ծուած է :

Սորվեցաք որ ամէն բան գիտամամբ ու նպատա-  
կով ստեղծուած են :

Աշխարհը ու իր վրայ բնակող մարդերը անա-  
տունները ու թռչունները, ինչպէս նաև բոլոր ե-  
ղած արտադրութիւնները, ծառերը, բոյսերը ու  
տունկերը ամէնքն ալ զանազան պաշտօններ  
ունին :

Այս մեծախորհուրդ ստեղծուածներուն վրայ  
հիանալով ու զմայլելով գիտած ատեննիս կարծես  
աստեղ ալ լիզու ունեցող ու խօսիլ գիտցողներու  
պէս մեզի պիտի ըսեն ու իմացնեն թէ՛

Կայ Ամենակարող Աստուած մը որ մեզ ոչնչէ  
ստեղծեց, հնարեց զատ զատ պաշտօններ կատա-  
րելու նպատակաւ և ասոր համար ալ մեզի զօրա-  
ցուց և մեր պէտքերով օժտեց :

Այս ստեղծուածներն թէ զատ զատ և թէ ա-  
մէնքը մէկտեղ հաւաքաբար առնելով եթէ վրա-  
նին խորհինք պիտի տեսնենք թէ՛

Այս արարածներն ամէնքն ալ անհուն հանճա-

րով ու հն  
ծուած են :

Որովհետեւ Երբեք չենք տեսնում թիւեր ՀՈ-  
ԳԵԿԱՆ գոյ և այլն և այլն և այլն և այլն  
Աստուած

Նոյնպէս երկինքի ու երկրի այս ստեղծուած-  
ները անհուն ու անչափ տարածութեան մէջ ջրը-  
ուող, շարժող ու շարժեցնող Աստուած՝ հարկաւ  
իբ ներկայութեամբ անհամեմատ կերպիւ անհուն  
ու անսահման է :

Այնպէս որ իբ ներկայութենէն բան մը չկրնար  
բացակայ ըլլալ կամ խուսափիլ :

Հետեւաբար Աստուած ամէն տեղ է իբ զօրու-  
թեամբ :

Ինչպէս իբ անսահման ներկայութեամբը նոյն-  
պէս և իբ անհուն գիտութեամբը գիտէ ամէն  
բան ու իրմէ բան մը ծածկուած չկրնար ըլլալ :

Ուր որ նայիս ու ինչի որ նայիս վայրկենական  
կը տեսնես իբ զօրութիւնը, սքանչելիքը, հոգը ու  
խնամքը :

Ուստի Աստուած Ամենապէտ է :

Մենք կարող չենք Աստուած տեսնել, վասն զի  
Աստուած ՀՈԳԻ է :

Մենք չունինք հոգի տեսնելու զգայարանք :

Մեր հոգի ունենալնիս, նոյն խակ մեր հոգին  
մեզ կ'իմացնէ :

Այսպէս մեր ՀՈԳԻՆ է որ մեզ կ'իմացնէ Աս-  
տուծոյ գոյութիւնը :



Միս

ՊԼՈՒՌ ՍԲ.

Գնուս ար.

Մենք

Աստուծոյ

ներկայութեան առջև

ՏՈՒԱԾ

ի՞նչ որ խորհինք ու իբր ան-  
սութենէն ու գիտութենէն չկրնար վրիպել :

Մեր հաստատ կամքն ու պաշտօնը պիտի ըլլայ  
ինքզինքնին սիրով իրեն յանձնել ու իր Սուրբ  
կամայը հպատակել :

Վասն զի ՆԱ է մեր Սրարիչ Աստուածը ու Հայրը :  
Ապրինք, մեռնինք միշտ իրենն ենք և պէտք է  
որ իրեն հետ կապուինք, ԱՂՕԹԻՒՎ իր կամքը կա-  
տարենք, ԻՐԱՐ ՍԻՐԵՆՒՅԻ ու ԲԱՐԻ ըլլանք :

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Մինչև այստեղ ի՞նչ սորվեցաք :—Ուրիշ ի՞նչ :—Այս  
ստեղծուածները ի՞նչ պիտի իմացնեն մեզ եւ թէ ի՞նչ  
պէտք :—Ստեղծուածները զատ զատ կա՛մ հաւաքաբար  
ի՞նչ կը ցուցնեն :—Հանձարն ու հնարագիտութիւնն ի՞նչ  
զօրութիւններ են :—Ուրեմն Աստուած ի՞նչ է :—Աստ-  
ուած ամենազէ՛տ է :—Ունինք մենք հոգի ականելու  
զգայարանք :—Մեր հոգի ունենալնիս ո՞վ կ'իմացնէ մեզ :  
—Այն գոյութիւնը ո՞վ :—Ամէն բանէ վեր ի՞նչ ունենա-  
լու ենք աչքերնուս առջին ու ի՞նչպէս ապրելու ենք :



